

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10

Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի գիտխորհրդի

17.06.2019 թ. նիստի

Օրակարգ

1. Բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական աշխատանքների արդյունքների ամփոփում:
2. 2018-2019 ուս. տարում ամբիոնների կատարած աշխատանքների վերաբերյալ ամբիոնների վարիչների հաշվետվություն /Շ. Պարոնյան, Ռ. Ղազարյան, Զ. Հարությունյան/:
3. Մեթոդխորհրդի նախագահի 2018-2019 ուս.տարվա հաշվետվություն:
4. ՈւԳԸ նախագահի հաշվետվություն:
5. Ս. Գասպարյանի, Մ. Ապրեսյանի ընտրության հարցը:

Ընթացիկ հարցեր Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 36 անդամներից 33-ը:

ԵԼՀ Ֆակուլտետի դեկան, գիտխորհրդի նիստի նախագահ Գ.Բարսեղյանը ողջունեց գիտխորհրդի կազմին և ներկայացրեց գիտխորհրդի նոր ընտրված անդամներին :

1. ԼՍԵՑԻՆ՝ Գիտխորհրդի նախագահը ներկայացրեց ԵԼՀ ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական աշխատանքների արդյունքները՝ նշելով, որ դրանք անց են կացվել հավուր պատշաճի՝ հավելելով, որ եղել են երեք բողոքարկված աշխատանքներ, սակայն բողոքարկման արդյունքում գնահատականի փոփոխություն տեղի է ունեցել միայն երկու դեպքում:

2. ԼՍԵՑԻՆ

- ԵԼՀ Ֆրանսիական բանասիրության ամբիոնի վարիչ մ.գ.թ.,դոց Զ. Հարությունյանի՝ 2018-2019 ուս. տարվա հաշվետվությունը: Զ. Հարությունյանը նշեց, որ դասավանդման գործընթացում մեծ ուշադրություն է դարձվում ունկնդրությանը: Ամբիոնականները աշխատանքներ են ծավալվել Իջևանի մասնաճյուղում: Լույս է տեսել Ֆրանսիական բանասիրությանը առնչվող չորս հոդված, երկու ուսումնական ձեռնարկ, մեկ մենագրություն: Ամբիոնում կա երկու հեռակա ասպիրանտ, ամբիոնի դասախոսները շարունակում են աշխատանքը ատենախոսական թեզերի վրա: Կազմակերպվել են Ֆրանկոֆոնիայի միամսյակին նվիրված մի շարք միջոցառումներ:
- ԵԼՀ Միջմշակութային հաղորդակցության անգլենի ամբիոնի վարիչ Բ.գ.դ.,պրոֆ Շ. Պարոնյանի՝ 2018-2019 ուս. տարվա հաշվետվությունը: Շ. Պարոնյանը նշեց, որ ամբիոնը համագործակցում է ՏՏ ոլորտի մի շարք կազմակերպությունների հետ և այս ուսումնական տարվանից բակալավրիատի ուսումնական պլանում կատարվել է փոփոխություն, որով նախատեսվում է ներդնել copywriter /համակարգչային գրագրության տեղեկատվություն/ նոր մասնագիտացում: : Ամբիոնի դասախոսները կիրառում են ուսուցման նոր ձևեր: Ամբիոնի դոցենտ Մ.Յաղուբյանը մասնակցել է ERAZMUS+ PRINTEL ծրագրին և մայիսի 16-17 առաջին կուրսի ուսանողների հետ մասնակցել նույն ծրագրի աշխատաժողովին: Ամբիոնի դասախոսները ընդգրկված են նաև երկու միջազգային գրանտային ծրագրերում: Ուսումնական ծրագրով ուսանողների համար նախատեսվում են մի շարք դասախոսություններ: Ամբիոնում տպագրվել է չորս հոդված, մեկ դասագիրք: Ամբիոնում կատարվում են դասալսումներ:

- ԵԼՀ Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի վարիչ Ռ.Ղազարյանի՝ 2018-2019 ուս. տարվա հաշվետվությունը: Ռ.Ղազարյանը նշեց, որ ինտենսիվ աշխատանքներ են տարվում բակալավրիատի նոր մասնագիտացման և կրթական ծրագրերի վրա: Ժեշովի համալսարանի թարգմանության ամբիոնի վարիչ Լուսինա Հարմոնը չորս ամիս գտնվել է Հայաստանում և վարպետության դասեր իրականացրել ամբիոնի շրջանակներում, որի հետ նաև նախատեսվում է համատեղ կոնֆերանս : Ռ. Ղազարյանը հավելեց, որ ուսանողները մեծ ոգևորություն են ապրում թե՛ լինգվաֆոնային/սինխրոն/ լսարանի բացման առիթով, թե՛ այն առիթով, որ որոշակի թեթևացվել է նրանց տեսական առարկաների ցանրաբեռնվածությունը :

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ի գիտություն ընդունել ամբիոնների վարիչների / Ջ. Հարությունյան, Շ.Պարոնյան, Ռ.Ղազարյան /՝ 2018-2019 ուս. տարում ամբիոնների կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները, հաստատել դրանք և նոր հաջողություններ մաղթել ամբիոններին:

3. ԼՍԵՑԻՆ՝

Մեթոդխորհրդի նախագահի 2018-2019 ուս.տարվա հաշվետվությունը: Ն. Հարությունյանը նշեց, որ ամբիոնները պատրաստ են իրագործել բակալավրիատի և մագիստրատուրայի նոր մասնագիտացումների և 2018-2019 թվականների համապատասխան կրթական ծրագրեր: Առաջարկվել է հաստատել ֆակուլտետի նոր

անվանումը՝ «Եվրոպական լեզուներ և հաղորդակցություն», քանի որ այն ժամանակակից հնչողություն ունի: Քննարկվել է դասավանդվող առարկաների յուրացման նոր, մատչելի, առավել արդյունավետ մեթոդների և եղանակների ներդրման կազմակերպման հարցը: Քննարկվել է նաև գրագողությունը կանխանգելու և պատժիչ չափորոշիչներ մշակելու հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ի գիտություն ընդունել և հաստատել Ն.Հարությունյանի հաշվետվությունը՝ մաղթելով նոր հաջողություններ:

4. ԼՍԵՑԻՆ՝

ՈՒԳԸ նախագահի հաշվետվությունը Ծ.Սուքիասյանը ներկայացրեց 2018-2019 ուս. տարում կայացած սեմինարների և դասընթացների բովանդակությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ի գիտություն ընդունել և հաստատել Ծ.Սուքիասյանի հաշվետվությունը՝ մաղթելով նոր հաջողություններ:

5.ԼՍԵՑԻՆ՝

Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ՝ Ս. Գասպարյանի ընտրության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Ֆակուլտետի դեկան, բ.գ.թ., դոց. Գ. Բարսեղյանը, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ. Ա.Մելքոնյանը, դոցենտ Գ.Գրիգորյանը, մ.գ.թ., դոց. Ա. Ոսկանյանը, բ.գ.թ., դոց. Մ.Դալալյանը և այլք: Ելույթ ունեցողները նշեցին, որ Ս. Գասպարյանը պարտաճանաչ, բարեխիղճ և սկզբունքային

անձնավորություն է՝ օժտված ներքին կազմակերպվածությամբ, գիտական բարձր ունակություններով, քաղաքացիական ճիշտ նկարագրով, որի շնորհիվ արդյունավետ կերպով ղեկավարում է ամբիոնի աշխատանքները և ակտիվ մասնակցում ֆակուլտետային բոլոր աշխատանքներին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ընտրել հաշվիչ հանձնաժողով Գ. Գրիգորյանի (հանձնաժողովի նախագահ), Գ. Մուրադյանի (հանձնաժողովի անդամ), Ամայյա Սողոմոնյանի (հանձնաժողովի անդամ) մասնակցությամբ և անցկացնել փակ, գաղտնի քվեարկություն: Քվեարկությունից հետո, ըստ հաշվիչ հանձնաժողովի նախագահի զեկույցի, ձայների 33 կողմ, 0 դեմ, 0 անվաներ արդյունքների հիման վրա հաստատվեց Սեդա Գասպարյանի ընտրությունը անգլիական բանասիրության ամբիոնի վարիչի պաշտոնում:

ԼՄԵՑԻՆ՝

ԵԼՀ անգլերենի թիվ 1 ամբիոնի վարիչ

Մ.Ապրեսյանի ընտրության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Ֆակուլտետի ղեկան, բ.գ.թ., դոց. Գ. Բարսեղյանը, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ. Ա.Մելքոնյանը, մ.գ.թ., դոց. Ա. Ոսկանյանը, բ.գ.թ., դոց. Ռ. Ղազարյանը և այլք: Ելույթ ունեցողները

նշեցին, որ Մ.Ապրեսյանը գործունյա, բարեխիղճ անձնավորություն է՝ օժտված կազմակերպչական բարձր ունակություններով, որի շնորհիվ արդյունավետ կերպով ղեկավարում է ամբիոնի աշխատանքները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ընտրել հաշվիչ հանձնաժողով Գ. Գրիգորյանի (հանձնաժողովի նախագահ), Գ. Մուրադյանի (հանձնաժողովի անդամ), Ամալյա Սողոմոնյանի (հանձնաժողովի անդամ) մասնակցությամբ և անցկացնել փակ, գաղտնի քվեարկություն: Քվեարկությունից հետո, ըստ հաշվիչ հանձնաժողովի նախագահի զեկույցի, ձայների 32 կողմ, 1 դեմ, 0 անվաներ արդյունքների հիման վրա հաստատվեց Մարգարիտա Ապրեսյանի ընտրությունը անգլերենի թիվ 1 ամբիոնի վարիչի պաշտոնում

6. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

Որոշեցին՝

- Հաստատել անգլիական բանասիրության ամբիոնի բակալավրիատի մասնագիտական նոր ծրագիրը
- Տպագրության երաշխավորել անգլիական բանասիրության ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Աննա Հակոբյանի «Persuasion Through Language ,Facts and Logic» մենագրությունը:
- Տպագրության երաշխավորել անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Ռուզաննա Առաքելյանի «Introducing Psycolinguistics» ուսումնական ձեռնարկը :
- Հաստատել Արտասահմանյան գրականության ամբիոնի «Արտասահմանյան գրականություն և գրական հաղորդակցություն»բակալավրիատի առկա ուսուցման նոր ծրագրի նախնական տարբերակը:

- Հաստատել Արտասահմանյան գրականության ամբիոնի «Համատեքստ» գիտական ամսագրի վերահրատակության փորձնական 1 համարի տպագրությունը՝ խմբագիր հաստատելով Բ.Գ.Պ., պրոֆ., Ա. Առաքելյանին:
- Տպագրության երաշխավորել Արտասահմանյան գրականության ամբիոնի Բ.Գ.Պ. Ռուզաննա Պետրոսյանի «Տեղերիկո Գարսիա Լորկայի ստեղծագործությունը» մենագրությունը, պատասխանատու խմբագիր հաստատելով Բ.Գ.Պ., պրոֆեսոր Ա. Առաքելյանին :

Գիտխորհրդի նախագահ՝

Գ. Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար՝

Մ. Դավալյան

17.06. 2019 թ.